Հրաչյա ՓԱՆՈՍՅԱՆ

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՐԿՐԱՄԱՍԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (XVI-XVIII դդ.)

Նախիջևանի երկրամասի[1] վարչական բաժանման վերաբերյալ արժեքավոր գրավոր աղբյուրները Մատենադարանի պարսկերեն վավերագրերն են: Այս բացառիկ փաստաթղթերի՝ մեր կողմից արված քննությունը ցույց է տալիս, որ խնդրո առարկա վարչամիավորը XVI-XVIII դդ. ավելի մեծ տարածք է ունեցել, քան «Աշխարհացույց»-յան Նախճավան գավառը: Այն ընդգրկում էր Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Նախճավան և Գողթն, Սյունիքի՝ Վայոց ձոր, Ճահուկ, Երնջակ ու Ծղուկ գավառները:

Էլդանության օրոք կազմավորված Թուման-ե Նախիջևան վարչական միավորը, որ XVդ.՝ թուրքմենական քոչվոր ցեղերի տիրապետության ընթացքում, դարձավ Հայաստանի վարչաքաղաքական կենտրոն, XVI դ. կեսերին կորցրեց իր ազդեցությունն ու մտավ Ատրպատականի վիլայեթի մեջ[2]: Այն ենթարկվում էր Թավրիզում նստող Ատրպանականի կառավարչին՝ ամիր-ուլ-ումարային (իշխանաց իշխան)[3]: Վարչական այս համակարգը պահպանվեց մինչև 1736 թ., երբ Նադիր շահի (1736-1747 թթ.) հրամանով Ատրպատականի վիլայեթի կազմում ձևավորվեց Նախիջևանի խանությունը[4]:

Նորաստեղծ Թուման-ե Նախիջևանը ևս ընդգրկում էր Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Նախճավան և Գողթն, Սյունիքի՝ Վայոց ձոր, Ճահուկ, Երնջակ ու Ծղուկ գավառները: Այն հյուսիս-արևմուտքից սահմանակից էր Երևանի վիլայեթին, արևելքից՝ Ղափանաթի օրուտին (գավառ): Երկրամասի բնական սահմաններն անցնում էին արևմուտքում՝ Արփա գետով, հյուսիսում՝ Վարդենիսի լեռնաշղթայով, արևելքում՝ Սյունյաց լեռնաշղթայով, հարավում՝ Արաքս գետի երկա-

---

[1] *Պարսկական պաշտոնական փաստաթղթերում* تومان *թուման,* قطعه *երկրամաս,* استان *վիլայեթ անվանումները զուգահեռ օգտագործվում էին (տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան թղթ. N 1ե վավ. N 678, 679, 688: Тбилисская коллекция персидских фирманов, т. II, составители М. А. Тодуа, И. К. Шамс, Тбилиси, 1989, с. 92-93, 100-105, 110.):*

Արևելյան Հայաստանի վարչական բաժանումը սեֆյանների օրոք կատարված էր ըստ վիլայեթների: Վարչական բաժանման այս համակարգն սկիզբ էր առնում դեռ էլդանության շրջանից և համապատասխանում էր թումաններին: Վիլայեթները բաժանվում էին ավելի փոքր վարչական միավորների՝ նահիաների, մահալների ու կառավարվում էին հաքիմների, նայիբների և բեկլարբեկիների կողմից: Սակայն առանձին մեծ կամ փոքր շրջանները օլքայի (բառացի նշանակում է «երկիր»՝ սեփականության մի ձև, որի ժամանակ հողը որպես ավատ տրվում էր քոչվոր ցեղի առաջնորդին և բարձրաստիճան զինվորականությանը՝ ամիրներին)՝ ժառանգական տիրույթի իրավունքով հանձնվում էին քոչվոր ցեղերի առաջնորդներին, որի դիմաց նրանք սեֆյան շահերի առաջ որոշակի պարտավորություններ էին ստանձնում: Այդպիսի ժառանգական տիրույթներ էին Նախիջևանի երկրամասը և Միսականի օլքան, առաջինի կառավարումը հանձնված էր քենգերլուներին, իսկ երկրորդինը՝ ուրդալլուների ցեղախմբի ներկայացուցիչներին (տե՛ս Tadhkirat al-muluk, a manual of safavid administration, by V. Minorsky, London, 1943, pp. 99-104):

[2] *Մատենադարանի պարսկերեն վավերագրեր, պրակ I (ԺԴ-ԺԶ դդ.), կազմեց՝ Հ.Փափազյանը, Եր., 1968, էջ 96:*

[3] *Մատենադարանի պարսկերեն վավերագրեր, հ. Ա, (ԺԴ-ԺԶ դդ.), կազմեց՝ Հ. Փափազյանը, Եր., 1956, էջ 97:*

[4] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան թղթ. N 1գ, վավ. 363:*

բությամբ ձգվող հարթավայրով[5]: Այն բաժանվում էր երկու մեծ շրջանների՝ Զուղայի և Շահապունիքի, որոնց գլխավոր քաղաքներն էին Օրդուբադն ու Նախիջևանը[6]: Այս երկու շրջաններն իրենց հերթին տրոհվում էին մահալների, Զուղան՝ Ազատ-Ջիրանի ու Դարաշամբի, Շահապունիքը՝ Դարալագյազի մահալի ու Սիսականի օլքայի[7]: Ազատ-Ջիրանի մահալը տարածվում էր Գեղան գետի ավազանում՝ ընդգրկելով Մեծ Հայքի Վասպուրական ու Սյունիք նահանգների Գողթն և Երնջակ գավառները, արևելքում սահմանակցում էր Սյունյաց (Զանգեզուրի) լեռնաշղթային: Սրան արևմուտքից սահմանակից էր Դարաշամբի մահալը, որից բաժանվում էր Երնջակ գետով, ընդգրկում էր Վասպուրականի՝ Նախճավան ու Սյունիքի Ճահուկ գավառներն: Դարաշամբի մահալը փռված էր Նախիջևան գետի ավազանում: Այն արևելքից սահմանակից էր Երնջակ գետին, հյուսիսից՝ Վայոց ձոր լեռներին, արևմուտքից՝ Արփա գետին, հարավային սահմանը հասնում էր մինչև Արաքս գետ: Սյունիքի Վայոց ձոր գավառի (Արփա գետի և նրա վտակ Եղեգիսի վերին հոսանք Հ.Փ.) տարածքին էր համապատասխանում Դարալագյազի մահալը: Սյունիքի Ծղուկ գավառի տարածքին էր համընկնում Սիսականի օլքան[8], որը տարածվում էր Որոտան գետի միջին հոսանքում: Չնայած Սիսականի օլքան վարչականորեն մտնում էր Թուման-ե Նախիջևանի կազմի մեջ, սակայն նրա կառավարիչները ենթարկվում էին ոչ թե Նախիջևանի հաքիմին, այլ անմիջականորեն Ատրպատականի իշխանաց-իշխանին[9]: Որպես Սեֆյան Պարսկաստանի վարչական միավորներ, վերոհիշյալ մահալները ձևավորվել են XVդ.՝ թուրքմենական ցեղերի կառավարման տարիներին, իսկ Սիսականի օլքան XVIդ. կեսերին՝ արդեն Սեֆյանների օրոք[10]: Սիսականի օլքան համաձայն շահ Աբբաս I-ի (1587-1629թթ.) արքունական պատմագիր Իսքանդար Մունշիի 1628թ. էմիրների ցուցակի, կառավարում էր Հասան սուլթան ուրդակլու հաքիմի կողմից, որը թուրքմեն ցեղից էր[11]:

Նախիջևանի երկրամասի վարչական կենտրոնը և գլխավոր քաղաքը Նախիջևանն էր: Այստեղ էր կենտրոնացված գլխավոր վարչական ապարատը, արհեստներն ու առևտուրը: Նախիջևան քաղաքից բացի, երկրամասում առևտրա-արհեստավորական խոշոր կենտրոններ էին հայաշատ Ագուլիս, Զուղա և Օրդուբադ քաղաքները: Մահալների կառավարիչները կոչվում էին բեկլարբեկիներ և նշանակվում էին երկրամասի կառավարչի կողմից: Բեկլարբեկիների պարտականությունն էր հետևել իրենց իշխանությանը հանձնված մահալներում տուրքերի նշանակման ու գանձման գործընթացին, լուծել բնակչության միջև ծագած վեճերը, ի կատար ածել դատարանի վճիռներն ու որոշումները[12]:

Սեֆյանների վարչական գլխավոր հենարանը թուրքալեզու՝ շամլու, ռումլու, ուստաջլու, թեքելու, աֆշար, կաջար և զուլքադար քոչվոր ցեղերն էին: Այդ ցե-

---

[5] *Chardin J., Voyages en Perse, et autres lieux de l'orient, tom I-III, Amsterdam, 1735, p. 303.*

[6] *Relation dv voyage d'Adam Olearivs en Moscovie, Tartarie, et Perse, tom I, Paris, 1679, p. 362.*

[7] *Մատենադարանի պարսկերեն հրովարտակներ, պրակ III, կազմեց՝ Ք. Կոստիկյանը, Եր., 2005, էջ 47, 77:*

[8] *Վարչական փոքր շրջան էր, որի մեջ մտնում էին Բնունիս, Թաս, Ղարաքիլիսա, Դաստաջերդ և Գյոյչազի գյուղերը (տե՛ս Մատենադարանի պարսկերեն վավերագրեր, հ. Ա, (ԺԴ-ԺԶ դդ.), կազմեց՝ Հ. Փափազյանը, Եր., 1956, էջ 64):*

[9] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. N 1ա, վավ. 99:*

[10] *Նույն տեղում, թղթ.N 1ա վավ. 11:*

[11] *Искандер М., Тарих-и Аламара-йи Аббаси, М., 1963, с. 80.*

[12] *Մատենադարանի պարսկերեն հրովարտակներ, պրակ III, կազմեց՝ Ք. Կոստիկյանը, Եր., 2005, էջ 76:*

ղերի մի մասը փոքրասիական ծագում ուներ, մյուս մասը միջինասիական[13]: Կզլբաշ ցեղերը Արևելյան Հայաստանում ժառանգական տիրույթներ՝ օլքա, ստացան և իրենց հորդաներով բնակություն հաստատեցին հիմնականում ստիմանամերձ շրջաններում: Ռուստաջլուների ցեղախմբին պատկանող՝ քենգերլու ցեղի առաջնորդներից և պարսից արքունիքին հավատարիմ պաշտոնյաներից էին ընտրվում[14] ու կառավարչի (یرمد), հաքիմի (حاکم), եահանգապետի (معاون فرمانـــدار), կամ սուլթանի (سلطان) տիտղոս կրում Նախիջևանի երկրամասի կառավարիչները և որպես պարսկական պետության պաշտոնյաներ արքունիքից վարձատրություն էին ստանում[15]:

Քենգերլուների ցեղախումբը բաժանված էր երկու ճյուղի, մի ճյուղը բնակություն էր հաստատել Խորասանում՝ Նեսիի շրջանում, որպեսզի պաշտպաներ շրջանը թուրքմենների ասպատակություններից, իսկ մյուս ճյուղը բնակություն էր հաստատել Նախիջևանում: Իսքանդար Մունշիի 1628թ. կազմած էմիրների ցուցակից պարզվում է, որ Մաքսուդ սուլթանը ոչ միայն Նախիջևանի, այլև Խորասանի քենգերլուների առաջնորդն էր, որի պատճառով էլ աղբյուրներում միաժամանակ նշվում է թե՛ որպես խորասանյան հաքիմ, թե՛ որպես Նախիջևանի հաքիմ[16]:

Փաստորեն, քենգերլուները մշտական բնակության վայր չունեին և քոչվորներ էին, որոնք Արևելյան Հայաստանում՝ պարսկական տիրապետության վերջնականապես հաստատվելուց հետո տեղավորվեցին Նախիջևանում ու ստանձնեցին երկրամասի կառավարումը:

Վերը նշվածից պարզվում է, որ Նախիջևանի երկրամասը XVI դ. կեսերին օլքայի իրավունքով հանձնվում էր քենգերլուներին[17]: Այս իրողությանը պետք է մոտենալ որոշակի վերապահումով, քանի որ մի շարք դեպքերում, պարսից շահերը Նախիջևանի երկրամասի կառավարումը՝ ժառանգական տիրույթի իրավունքով կարող էին հանձնել նաև մեկ այլ ցեղի առաջնորդի: Մասնավորապես, Շահ Իսմայիլ II կառավարման շրջանում՝ 1576-1578 թթ. Նախիջևանի կառավարիչն էր ազգությամբ քուրդ Շերեֆ խանը, որը մինչ այդ Պարսկաստանում ապրող քրդական ցեղերի «էմիրների էմիրն» էր, (էմիր-ալ-ումարա) և Շիրվանի մեծ մասի կառավարիչը[18]:

XVI դ. քուրդ հեղինակ Շերեֆ խան Բիթլիսցու վկայությամբ 1590 թ. գրավելով Նախիջևանի երկրամասը թուրքերը վարչական նոր փոփոխություններ չկատարեցին: Օսմանյան տիրապետության կարճատև շրջանում՝ 1590-1603 թթ. երկրամասը կառավարում էր Խիզիր փաշան[19]:

Նախիջևանի երկրամասի կառավարումը 1603-1604 թթ. ընթացքում մի քանի անգամ ձեռքից ձեռք է անցնում: Մինչև շահ Աբբաս I-ի արշավանքները երկրամասի կառավարիչ էր օսմանյան զորքերի հրամանատար Ալի փաշան: 1603 թ.

---

[13] *Петрушевский И. Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-начале XIX вв., Л., 1949, с. 36.*

[14] *Նշվ. աշխ., էջ 104-126.*

[15] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան թղթ. N 1ա վավ. N 10:*

[16] *Петрушевский И. նշվ. աշխ., էջ 132-133.*

[17] *Կզլբաշ ցեղերը քոչվորական կյանք վարելու համար բաժանվեցին ավելի փոքր ցեղախմբերի և հողեր ստացան Պարսկական տիրապետության տարբեր մասերում: 1576թ. ռուստաջլուների ցեղախումբը բաժանվեց մի քանի փոքր ցեղերի, որոնց թվում էր քենգերլուների ցեղը (տե՛ս Петрушевский И., նշվ. աշխ., էջ 50.):*

[18] *Шараф-хан Бидлиси, Шараф-Наме, М., 1967, с. 280.*

[19] *Նշվ. աշխ., էջ 291.*

Նախիջևան քաղաքը գրավում է պարսից զորավար Ջիլֆուղար խանը[20], սակայն 1604 թ. պարսից զորքերի նահանջից հետո օսմանյան զորքերի հրամանատար Ջղալ օղլի Սինան փաշան Նախիջևան քաղաքը հանձնում է իր զորավարներից մեկին՝ Օմար աղային: Որոշ ժամանակ անց շահ Աբբասը Նախիջևան է ուղարկում Ամիրգունա խանին: Վերջինս սպանում է Օմար աղային և ստանձնում երկրամասի կառավարումը[21]: Ամիրգունա խանից Նախիջևանի երկրամասի կառավարչի պաշտոնը անցավ Մաքսուդ-սուլթան քենգերլու ուստաջլուին, նրան հաջորդում է որդին՝ Իսմայիլ Ղուլի սուլթան քենգերլուն[22]: Այնուհանդերձ նկատենք, որ երկրամասի կառավարչի պաշտոնը ժառանգական չէր, յուրաքանչյուր նոր քենգերլու կառավարչի շահը հաստատում էր հատուկ ֆերմանով, դեպքերը շատ էին, երբ կառավարիչները սպանվում կամ փոխարինվում էին նույն տոհմի մեկ այլ ներկայացուցչով: Երկրամասի կառավարումը քենգերլուների համար ժառանգական դարձավ միայն XVIII դ. կեսերին, երբ Պարսկական պետության կենտրոնական վարչական համակարգի կազմալուծման արդյունքում ծայրագավառների կառավարիչները իրավունք ստացան իրենց պաշտոնը առանց շահական ֆերմանի փոխանցելու հորից որդուն:

Նախիջևանի երկրամասի հայկական բնակավայրերը XVI-XVIII դդ. Կառավարում էին հայ մելիքներն ու տանուտերերը, որոնց իշխանությունը ժառանգական էր և փոխանցվում էր հորից որդուն: Մատենադարանում պահվող ձեռագրերում հիշատակվում են մի քանի տասնյակ գյուղերի տանուտերերի ու մելիքների անուններ (ստորև մենք կնշենք նրանցից մի քանիսի անունները): Այսպես, Նախիջևանի Խառց գյուղի տանուտերն էր Ռսկանը, Ճահուկինը՝ Ցիսամջիան, Ցոնայինը՝ Մեթաղէն, Ջուղայի մելիքն էր՝ Մելքոնը[23]: Ջուղան կառավարվում էր նահապետական կառավարչաձևով, այսինքն՝ նահապետների կամ իշխանների ժողովով, որին նախագահում էր քաղաքագլուխը: 1604 թ. Ջուղայի քաղաքագլուխն էր անվանի խոջա՝ Խաչիկը[24]: Հայահոծ բնակավայրերը կառավարում էին մեկից ավելի մելիքները կամ տանուտերերը: 1665 թ. Ագուլիսի ու Դաշտ գյուղի մելիքներն էին Բաղալիջ Շահնազարն ու Մանվելը: Նման իրավիճակը պահպանվեց նաև հետագայում: Այս մասին Զաքարիա Ագուլեցին գրում է. «Դարցեալ, այսմ ամի (1673 թ.) Աքուլաց մելիքն բ (2) էլաւ: Ջերայ ներքին թաղն Քրդունց Ալէքսահն ուզեցին, գետի ես կողմս, որ է Վերին թաղ, սոքայ Ավին ուզեցին Ռսկանի տղայ. անունն Ովանէս է, Օվին կասին: Այսպէս բ (2) բաժանեցան, շատ աղմուկ լինէր մէջն»: Խաաս[25] հայտարարված՝ Շոռոթ, Լեհրամ ու Աստապատ, գյուղերը նույնպես կառավարում էին հայ մելիքները[26]:

Հայ կաթոլիկ համայնքները վարչականորեն ենթարկվում էին ոչ թե երկրամասի կառավարիչին, այլ Նախիջևանի կաթոլիկ եպիսկոպոսին և իրենցից գանձվող հարկերն ու տուրքերը վճարում էին Թավրիզում նստող Ատրպատակա-

---

[20] *Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, էջ 19-20:*

[21] *Նույն տեղում, էջ 71-72:*

[22] *Յուցակ հայերեն ձեռագրաց, Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, հ. Բ, կազմեց՝ Հ. Ոսկեան, Վիեննա, 1963, էջ 857:*

[23] *Մատենադարան, ձեռագրեր՝ NN 8269, 604:*

[24] *Ալիշան Ղ., Միսական, Վիեննա, 1893, էջ 424:*

[25] *Խաաս հայտարարված գյուղը պարսից շահի սեփականությունն էր, որից ստացվող հարկերն ու տուրքերը ուղարկում էին արքունիք:*

[26] *Զաքարիա Ագուլեցի, Օրագրություն, Եր., 1938, էջ 66, 78, 89, 119, 126:*

նի կառավարչին[27]: Կաթոլիկ բնակավայրերը ղեկավարում էին հայ տանուտերերը: Ապարաներ գյուղում 1653 թ. հունիսի 28 Հավատասփյուռ ժողովին՝ Նախիջևանի երկրամասի կաթոլիկ հայերի գրած նամակի տակ ստորագրել էին Ապարաների տանուտեր Բաբաջանը, որը 20 տարի ղեկավարում էր այդ համայնքը, Ճահուկի՝ Եարազիզ և Խոշկաշենի՝ Մուրադ տանուտերերը[28]:

Այսպիսով, Նախիջևանի երկրամասի հայկական բնակավայրերի ներհամայնքային գործերի կառավարումը հանձնված էր հայ մելիքներին ու տանուտերերին, բայց որպես սահմանամերձ երկրամաս՝ վերահսկողությունը տրամադրվել էր քենգերլու ցեղի ներկայացուցիչներին:

Նախիջևանի երկրամասը վարչական փոփոխությունների ենթարկվեց Նադիր շահի կառավարման ժամանակ: 1736թ. նրա հրամանով վերացվեց Թուման-ե Նախիջևան վարչամիավորը, և ձևավորվեց Նախիջևանի խանությունը[29], որի առաջին խանը Ռիզան էր[30]:

Իր եղբայր Իբրահիմ խանին Նադիրը նշանակեց Ատրպատականի, Վրաստանի և Դաղստանի կառավարիչ, որին ենթարկվում էին նշված մարզերի բոլոր բեկլարբեկները և հաքիմները[31]: Աբրահամ Կրետացին գրում է.«Ցետ այնորիկ սկսան՝ ի փետրվարի Ժ (10) բաժանել զԽիլայս որ է խալաթն: Նախ եղբօրն իւրում, որ բովանդակ Ատրպատականի աշխարհի՝ որ է պարսկերէն Ատրպէճան, վերակացու և սխրտար արար՝ որ է Սարասքեր. զՆախջևան, զԵրևան և զբոլոր եահանգն Արարատեան, և զՎրաստան՝ ի նա յանձնեաց, որ է պեկլէր-պէկի, իշխող և հրամանատու, և մեծ ի վերայ այլոց խաներաց»[32]:

Ինչ վերաբերում է Նախիջևանի խանությանը, ապա այստեղ, ըստ Աբրահամ Կրետացու, ի տարբերություն այլ երկրամասերի՝ նշանակվեց երկու կառավարիչ: Առաջինը կոչվում էր «հաքիմ-ե օլքայե Նախչևան», իսկ երկրորդը՝ «հաքիմ-ե թումանե Նախչևան»: Առաջինը, որ նշանակվում էր քենգերլու ցեղից, Նադիրի օրոք Միրզա Ռեզան էր, իսկ երկրորդը՝ հեծելազորի հրամանատար եահիբ Աղա Հասանը, որին Աբրահամ Կրետացին անվանում է խորասանցի և «այր բարեբարոյ. Խելոք, խոնհար և բարեմիտ»: Միրզա Ռեզան պետական հարկերը թաքցնելու համար հետազայում հեռացվեց պաշտոնից եւ պատժվեց, իսկ Նախիջևանի միանձնյա կառավարիչ մնաց Աղա Հասանը[33]:

Օգտվելով Պարսկաստանում խորացող քաղաքական ճգնաժամից՝ XVIII դ. կեսերին Նախիջևանի երկրամասում իրենց ժառանգական գերիշխանությունը վերահաստատեցին քենգերլուները: Ժառանգական էր ոչ թե Նախիջևանի երկրամասը, այլ Նախիջևանի հաքիմի և նրա արքունիքում վարվող պաշտոններն ու քենգերլուների վաքիլի տիտղոսը, որոնք շնորհվում էին շահի հատուկ ֆերմաններով: Նախիջևանի հաքիմը պարսկական արքունիքի հետ իր կապերը պահպանում էր հարկերով ու պատանդներով (հարկը հպատակության ապացույցն էր, իսկ պա-

---

[27] *Chardin J., op. cit., tom III, pp. 114-115.*

[28] *Հայաստանի պատմության նիւթեր Կենտրոնական Եւրոպայի դիւաններում (տե՛ս Կարապետյան Մ.,Նորահայտ փաստաթղթեր Նախիջևանի ԺԷ դարի առաջին կեսի պատմության վերաբերյալ), Եր., 2001, էջ 63-65:*

[29] *Histoire de Tahmas Kouli-Kan, roi de Perse, nouvelle edition, Paris, 1743, p. 299.*

[30] *Աբրահամ Կաթողիկոսի Կրետացւոյ Պատմագրութիւն Անցիցն Իւրոց եւ Նատր-Շահին Պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 33:*

[31] *Арунова М. Атрафян К., Государство Надир-Шаха Афшара, Москва, 1958, с. 111.*

[32] *Աբրահամ Կաթողիկոսի Կրետացւոյ, էջ 57:*

[33] *Նույն տեղում, էջ 83-88:*

տանդը՝ հնազանդության): Նկատենք, որ հաքիմի պաշտոնը և նույնիսկ ֆիզիկական ապահովությունը երաշխավորված չէր, ցանկացած պահի նրան կարող էին սպանել կամ զրկել իշխանությունից և ուրաքանչյուր նոր հաքիմ, գիտակցելով իր իշխանության ժամանակավոր բնույթը, փորձում էր հարստություն կուտակել՝ առիթ տալով բազմաթիվ չարաշահումների ու բռնությունների հայ բնակչության նկատմամբ: Հաքիմի պաշտոնյաները՝ բեկերը, ծառայության համար չէին վարձատրվում, նրանց էր մնում հավաքած հարկերի մի մասը և իրենց նվիրած գյուղերի ամբողջ եկամուտը: Բացի այդ, նրանց շնորհվում էին նաև ազատ հողատարածքներ, որտեղ բնակություն էին հաստատում բեկերին ազգակից քոչվոր ցեղերը[34]: Հաքիմի բոլոր առանձնաշնորհումները իր պաշտոնյաներին արվում էր առանձին թալաղա կամ թալիկե կոչված թղթերով[35]: Այնուամենայնիվ, երկրամասի կարևոր պաշտոնյաներին նշանակում էր պարսից շահը՝ առանձին ֆերմաններով[36]: Կառավարման այս համակարգը պահպանվեց մինչև 1828 թ. (Ռուսաստանի կողմից Նախիջևանի երկրամասի գրավվելը-Հ.Փ.):

Նախիջևանի երկրամասի հայկական բնակավայրերը կառավարվում էին հայ մելիքական տների ներկայացուցիչների կողմից: Այսպես, 1750 թ. Նախիջևան քաղաքի ու Աստապատի մելիքն էր Բալումը: Նրան հաջորդում են որդին՝ Խաչատուրը, և թոռը՝ Միքայելը, որի սերունդները XVIII դ. վերջերին տեղափոխվում ու հաստատվում են Թիֆլիսում[37]:

1750 թ. Նախիջևանի հաքիմ Հեյդարի դեմ պարսից շահին բողոք ներկայացնելու համար Թավրիզ մեկնած հայ մելիքներից Միքայել Չամչյանը նշում է շոռթեցի Ալեքսադր Աղամալյանին, շահկերտցի Հովհաննեսին, Մխիթարին և Ղազարին, Աստապատի մելիքներ Բարաղամին և Պալումին, Աստապատի իշխան Կարապետ Ծատուրյանին[38]: 1765 թ. Հակոբ վարդապետին նվիրակություն ուղարկելով Նախիջևան՝ Սիմեոն Երևանցին նրա միջոցով նամակներ է ուղարկում Նախիջևանի երկրամասի մելիքների անունով, առանց հիշատակելու մելիքներին պատկանող բնակավայրերը. «Նուիրակական կոնդակ. Ա Ռաղամի սուրաթ,Դ Ցանձնարարութիւնք առանց անուան: Եւ անուամբ ԺԱ թուղթ ևս առ Մելիքսն, այսինքն՝ Պետրոսն, Անդրէասն, Բատալն, Ոսկանն և Պարոն Աղամիրզայն, Սաֆրազն, Քօլին, Մարութայն, Վարդազարն, Մանուչարն, Յոհանն, և Ստեփանն: Գրեցաւ նաև՝ Դ թուղթք առ Քեալանթար Պետրոսն և Պարոն Աւետիքն և առ Քեարամ, Աղայ, և Խաչատուր տանուտերն: Թ թուղթք ևս առ Պարոն Գալուստն և Դատին, Հարունն, Յոհանն, Մահտեսի Յարութիւնն և Պարոն Գրիգորն, Դաւիթն, Բուդախն, և Աբէլն»[39]: Քերիմ խան Զենդի հրամանով 1774 թ. Ազատ-Ջիրանի մահալի (Գողթն գավառ- Հ.Փ.) հայոց քալանթար է նշանակվում Վերին Ագուլիսի մելիք Աղամիրզայի ժառանգ մելիք Հարությունը[40]: 1797 թ. փետրվարին Աղա Մուհամմադ շահի կողմից Ազատ-Ջիրանի մահալի քալանթար է հաստատվում մելիք Հարությունի

---

[34] *Тбилисская коллекция персидских фирманов, т. II, с. 84-94.*

[35] *Иваненко В., Гражданское управление Закавказьем от присоединения Грузии до наместничества великого князя Михаила Николаевича, Тифлис, 1901, с. 138-139.*

[36] *Тбилисская коллекция персидских фирманов, т. II, с. 92-96.*

[37] *Լուսաւոր գրական հանդէս, գիրք Ա, Տփղիս, 1900, էջ 293-294:*

[38] *Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784, յօրինեալ ի Հայր Միքայել վարդապետէ Չամչյանց, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 835-848:*

[39] *Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, Սիմէոն կաթողիկոսի Յիշատակարանը, հրատ. Գիւտ քահանա Աղանեանց, Թիֆլիս, 1894, էջ 321:*

[40] *Тбилисская коллекция персидских фирманов, т. II, с. 94-95.*

որդին՝ Շմավոն բեկը, որին հանձնարարվում է հավաքել մահալի հայ զինակիրներին, դառնալ նրանց առաջնորդը, ապահովել զինամթերքով և նրանց հասցնել կատարելության, որպեսզի շուտով՝ շահի Ղարաբաղ շարժվելու դեպքում, պատրաստ լինեն միանալու շահի ճամբարին[41]:

Այսպիսով, հայ բնակչության համար առանձնացված էին վարչական հատուկ պաշտոններ, որոնք կոչված էին կարգավորելու երկրամասի մահմեդական կառավարիչների հետ հայ բնակչության փոխհարաբերությունները: Այդպիսիք էին հայահոծ բնակավայրերում մելիքի և քալանթարի պաշտոնները, որոնք, ժառանգական լինելուց բացի, կարևոր նշանակություն ունեին հայկական բնակավայրերում ներհամայնքային ու արտահամայնքային գործերի կառավարման մեջ:

Նախիջևանի երկրամասը 1790 թ. ենթարկվում է վարչատարածքային նոր ձևափոխման: Օրդուբադի շրջանը մեզ անհայտ պատճառներով անջատվում է Նախիջևանի երկրամասից և միացվում Թավրիզի փոխարքայությանը որպես ինքնուրույն վարչական միավոր (Նախիջևանի երկրամասը ևս մտնում էր Թավրիզի կամ Ատրպատականի փոխարքայության մեջ)[42]: Ձևափոխումների ենթարկվեց նաև երկրամասի ներքին վարչատարածքային կառուցվածքը: Օրդուբադի շրջանը, որը նախկինում համապատասխանում էր Ազատ-Ջիրանի մահալին՝ տրոհվում էր հինգ փոքր վարչամիավորների՝ Օրդուբադի, Այլիի (Ագուլիս), Դաստինի, Չանանաբի, Բելևի, մահալների, ընդ որում, այս մահալները կառավարիչներ չունեին, մահմեդական գյուղերը ղեկավարում էին քյատխուդաները, իսկ հայկական գյուղերը՝ մելիքները: Օրդուբադ և Այլի մահալները տարածվում էին նույնանուն գետերի ավազանում, Դաստինի մահալը Վանանդ, Չանանաբ և Բելևի մահալները՝ Ուստուկ ու Գեղան գետերի ավազաններում: Նախիջևանի երկրամասը բաժանվում էր չորս մահալների՝ Ալանջիկ (Երնջակ), Նախիջևան, Խոք և Դարալագյազ, այս մահալները նույնպես կառավարվում էին նույն սկզբունքով, ինչպես Օրդուբադի շրջանը: Ալանջիկի մահալը տարածվում էր Նախիջևանի երկրամասի արևելյան մասում՝ Երնջակ գետի ավազանի շրջանում: Արևմուտքից սահմանակից էր Նախիջևանի մահալին, արևելքից՝ Սյունյաց լեռնաշղթայի Դարդաղ լեռնաճյուղով բաժանվում էր Օրդուբադի շրջանից: Նախիջևանի մահալը փռված էր Նախիջևան գետի միջին հոսանքի շրջանում, տարածվում էր Արաքս գետի ձախ ափից մինչև Սյունյաց լեռնաշղթան, իսկ արևելքից սահմանակից էր Ալանջիկի, հյուսիս-արևմուտքից Խոքի ու Դարալագյազի մահալներին: Խոքի մահալը արևելքում սահմանակից էր Նախիջևանի մահալին, արևմուտքում Արփա գետով սահմանազատվում էր Շարուրից, հյուսիսում Վայոց ձորի լեռներով բաժանվում էր Դարալագյազի մահալից, հարավային սահմանն անցնում էր Արաքս գետով: Դարալագյազի մահալը տարածվում էր Արփա գետի և նրա աջակողմյան վտակ Եղեգիսի վերին հոսանքում, հարավում Վայոց ձորի լեռներով սահմանակցում էր Խոքի մահալին, հյուսիս-արևելքում Սյունյաց լեռնաշղթայով՝ Ղարաբաղի խանությանը, արևմուտքից Վարդենիսի լեռնաշղթայով՝ Երևանի խանությանը: Դարալագյազի մահալը բաժանվում էր երկու՝ արևելյան ու արևմտյան մասերի, որոնց սահմանաբաժան գիծը հյուսիսից հարավ անցնում էր Արփա գետի ակունքներից մինչև Արփա գյուղ[43]: Վարչական այս բաժանումը անփոփոխ պահպանվեց մինչև 1828թ.:

Այսպիսով, XVIդ. սկզբներին թուրքմենական քոչվոր ցեղերից ժառանգելով նրանց վարչական համակարգը՝ սեֆյանները Նախիջևանում վարչական նոր փո-

---

[41] *Тбилисская коллекция персидских фирманов, т. II, с.108.*

[42] *Иваненко В. նշվ. աշխ., էջ 240.*

[43] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. N 1 գ, վավ. 513:*

փոխություններ չկատարեցին: XVIII դ. վերջերին Նախիջևանի երկրամասը վարչական սահմանները որոշ փոփոխություններ կրեցին: Դա վերաբերում է հատկապես 1790 թ. վարչական ձևափոխմանը, երբ Օրդուբադի շրջանը անջատվեց երկրամասից և դարձավ Ատրպատականի վիլայեթին ենթակա շրջան: Նախիջևանը, լինելով սահմանամերձ երկրամաս, հանձնված էր քենգերլուների քոչվոր ցեղախմբի ավագանու կառավարմանը: Միաժամանակ մեծաթիվ հայ բնակչություն ունեցող բնակավայրերը շարունակում էին կառավարվել մելիքական տների կողմից: Ակնհայտ է, որ պարսից շահերի համար մելիքական տների գոյությունը հակակշիռ էր երկրամասում բնակություն հաստատած քենգերլուների ցեղախմբի առաջնորդներին, որոնք անընդհատ ձգտում էին անջատվել կենտրոնական իշխանությունից և դառնալ ինքնուրույն:

НАХИЧЕВАНСКАЯ ПРОВИНЦИЯ В АДМИНИСТРАТИВНОЙ СИСТЕМЕ ПЕРСИИ (XVI-XVIII вв.)

Резюме *Г. Паносян*

В начале XVI века сефевиды, наследуя административную систему туркменских кочующих племен, не произвели никаких административных изменений. Нахичеванская провинция имела более большую админстративную границу, чем "Ашхарацуйц"-ян гавар Нахиджевана. Нахичеванская провинция включала Мец Айк, губернию Васпуракана, гавары Нахиджеван и Гохти, гавары Вайоц Дзор, Чаук, Ернджак и Цхук Сюникской губернии. Нахиджеван был пограничной провинцией и оставался под властью кочующих племен-кенгерли, под управлением их вождей. Племя кенгерли было одним из кочующих туркменских племен, у которых не было постоянного местожительства и они вели кочующий образ жизни. После утверждения персидских владений в Восточной Армении их вожди с кочующими племенами обосновались в Нахиджеване и стали управлять провинцией. Из вождей этих племен и верных служителей персидского двора были выбраны губернаторы, акими, султаны и, как верные служители персидского двора, получали вознаграждение.

Армянской общиной управляли дома меликов. Для армянского населения было разработано специальное административное положение, которое определяло соотношение жителей и местных служащих. Согласно данному положению, мелики и калантары были не только наследственными, но и они имели важную роль в управлении армянской общиной.

Տեղեկություններ հեղինակի մասին
Փանոսյան Հրայր Երանի - ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հայցորդ. Email: hrach-84@list.ru